ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Արամայիս Հայկազի Սիմոնյանի «Հանրակրթության ոլորտի ռազմավարական կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հանրակրթությունը մշտապես գտնվում է զարգացման գործընթացում՝ համահունչ լինելով երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական փոփոխություններին: Հանրակրթական գործընթացների փոխակերպումները չեն կարող տեղի ունենալ ինքնաշխատ, ուստի նպատակաուղղված կառավարման կարիք ունեն ինչպես համակարգի կառավարման վերին օղակներում (կառավարություն, պետական գերատեսչություններ), այնպես էլ միջին և ստորին հարթություններում (տեղական ինքնակառավարման մարմիններ, դպրոցներ և քաղաքացիական հասարակության կառույցներ): Այս համատեքստում հանրակրթության զարգացումը հնարավոր է միայն ռազմավարական կառավարման ներդրման տրամաբանությամբ, որը հատում է ընթացիկ վերահսկողական և կազմակերպման գործառույթների սահմանները:

Փորձը ցույց է տալիս, որ ՀՀ-ում դեռևս բացակայում են հանրակրթության զարգացման ռազմավարական կառավարման համար կիրառելի գործողությունների առանցքային ցուցանիշներ, որոնք հնարավորություն կտային իրականացնել համակարգի «ներքևից վերև» գնահատում, բացահայտել համակարգի գործունեության թույլ օղակներն ու զարգացմանը խոչընդոտող սպառնալիքները: Նշված բացը սահմանափակում է ռազմավարական որոշումների հիմնավորվածությունը և հանրակրթության ֆինանսավորման արդյունավետ ուղղորդումը:

Հանրակրթության ռազմավարական կառավարման տեսամեթոդաբանական հիմնախնդիրների քննարկումներն իրենց մեկնաբանություններն են ստացել ինչպես հայազգի, այնպես էլ արտասահմանցի հեղինակների կողմից: Միևնույն ժամանակ, ոլորտի բարելավմանն ուղղված մի շարք առանցքային հիմնախնդիրներ դեռևս իրենց խորքային լուծումները չեն ստացել ՀՀ հանրակրթության կառավարման համակարգում, ինչն էլ կանխորոշել է գիտական հետազոտության նպատակը և ատենախոսության առջև դրված խնդիրները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակը ՀՀ հանրակրթության ոլորտի արդի վիճակի համալիր հետազոտության հիման վրա զարգացման ռազմավարական ուղղությունների բացահայտումն է:

Ելնելով հետազոտության նպատակից՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել և վերլուծել հանրակրթության ոլորտում ռազմավարական կառավարման էվոլյուցիան,
- ներկայացնել հանրակրթության ռազմավարական կառավարման համաշխարհային առաջավոր փորձը,
- վերլուծել ՀՀ հանրակրթական համակարգի առաջընթացի վրա ազդող գործոնները և դրանց հիման վրա գնահատել ոլորտի զարգացմանը միտված ռազմավարական կառավարման բարելավման հնարավորությունները,

- բացահայտել ՀՀ հանրակրթության ոլորտի ռազմավարության հայեցակարգային ուղղությունները՝ հաշվի առնելով ստեղծարար կառավարչական գործելաոճը, ինքնակարգավորվող կառավարման մոտեցումները, ներառականության և փոխըմբռնման հենքով որոշումների կայացման հնարավորությունները,
- գնահատել հանրակրթության զարգացման ուղղությամբ պետական ֆինանսավորման միտումների ու միջնակարգ ընդհանուր կրթությամբ գործազրկության դրսևորումների միջև կապի սերտությունը, և ներկայացնել դրանց փոխառնչության չափելիության մեթոդաբանական մոտեցում,
- մշակել հանրակրթական համակարգի արդի վիճակի ռազմավարական գնահատման երկչափ մատրիցա,
- մշակել հանրակրթության զարգացման ռազմավարական նպատակադրումների աստիճանակարգման մեթոդաբանական մոտեցում՝ հիմնված տարբեր շահառուների առաջնահերթությունների հարաբերական կշռման վրա, և գնահատել նշված նպատակադրումների իրականացման մակարդակը՝ կատարողականի առանցքային ցուցանիշների համատեքստում,
- սահմանել հանրակրթական համակարգում կատարողականի առանցքային ցուցանիշներ՝ հասցեագրված կրթության տարբեր շահառուների պահանջմունքներին,
- մշակել դպրոցների տարեկան ֆինանսավորման ծավալի վերագնահատման նոր մոտեցում՝ հիմնված կրթական հաստատությունում գործող կատարողականի առանցքային ցուցանիշների վրա:

Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթը արտահայտվում է ՀՀ հանրակրթության ռազմավարական կառավարման կատարելագործման նոր համակարգային մոտեցման ձևավորմամբ: Մասնավորապես.

1. Կառուցվել է հանրակրթական համակարգի ռազմավարական գնահատման երկչափ մատրիցային մոդել և համակարգի ախտորոշման համաթիվ՝ հանրակրթության որակի և հասանելիության համադրությամբ, որը հնարավորություն է տալիս վերլուծել ու գնահատել երկրի հանրակրթական համակարգի զարգացվածության մակարդակը և ռազմավարական միջամտություն պահանջող հիմնական ուղղությունները:
2. Մշակվել է հանրակրթությանն ուղղված պետական ֆինանսավորման և միջնակարգ ընդհանուր կրթությամբ գործազրկության դրսևորումների փոխառնչության գնահատման համաթիվ, որը հնարավորություն է տալիս բացահայտել տվյալ երկու ցուցանիշների փոփոխությունների ուղղությունն ու ինտենսիվությունը, և կատարել համապատասխան կառավարչական եզրահանգումներ:
3. Կառուցվել է հանրակրթական համակարգի ռազմավարական նպատակադրումների աստիճանակարգման վրա հիմնված մոդել, որը թույլ է տալիս հանրակրթության ռազմավարական կառավարման գործընթացում սահմանել նպատակադրումների առաջնահերթությունների հարաբերական կշիռները և գնահատել դրանց իրականացումը՝ կատարողականի առանցքային ցուցանիշների (ԿԱՑ) համատեքստում:
4. Մշակվել է դպրոցներին տրամադրվող պետական ֆինանսավորման ծավալի վերագնահատման կառուցակարգ, որի շրջանակներում ներդրվել է խթանող ֆինանսավորման բաղադրիչը՝ հիմնված դպրոցի տարեկան կատարողականի արդյունքների վրա: Սա հնարավորություն է տալիս պետական ֆինանսավորման լրացուցիչ բաղադրիչը կապել դպրոցի իրական առաջընթացի հետ և խթանել վերջինիս

արդյունավետ գործունեությունը:

Ատենախոսության արդյունքների գիտագործնական նշանակությունը: Ատենախոսությունն իրենից ներկայացնում է հանրակրթության ոլորտի ռազմավարական կառավարման մեթոդաբանական շրջանակի ձևավորման նպատակով իրականացված հետազոտություն, որում առաջարկվում են հանրակրթության կառավարման գործառույթների լավարկման և համակարգի զարգացմանն ուղղված միջամտությունների մեթոդաբանորեն հիմնավորված լուծումներ:

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ հանրակրթության համակարգում՝ ապահովելով ռազմավարական որոշումների հիմնավորվածության բարձրացում և ծառայելով հիմք՝ հետագա գիտափորձարարական ուսումնասիրությունների և քաղաքականությունների ձևավորման համար:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը: Ատենախոսությունը շարադրված է 158 էջի վրա՝ առանց հավելվածների և հապավումների ցանկի, և բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից և հապավումների ցանկից:

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպվում են հետազոտության նպատակը և խնդիրները, հստակեցվում են հետազոտության օբյեկտը և առարկան, մեթոդաբանությունը, ներկայացվում են հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը, դրանց գիտագործնական նշանակությունը, արդյունքների հրապարակումը, ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին՝ **«Հանրակրթության ռազմավարական կառավարման տեսական և մեթոդաբանական հիմքերը»** գլխում ներկայացվել է հանրակրթական համակարգի էությունը և զարգացման միտումները, կրթության և աղքատության փոխկապվածության տեսական հիմքերը, ռազմավարական կառավարման էվոլյուցիան հանրակրթության ոլորտում, վերլուծության է ենթարկվել հանրակրթության ռազմավարական կառավարման համաշխարհային առաջավոր փորձը և քննարկվել լավագույն փորձի տեղայնացման հնարավորությունները ՀՀ-ում:

Ատենախոսության երկրորդ՝ **«Հանրակրթության ռազմավարական կառավարման հիմնախնդիրների վերլուծությունը ՀՀ-ում»** գլխում հեղինակի կողմից լուսաբանվել է ՀՀ հանրակրթության օրենսդրական դաշտում առկա հիմնախնդիրների մասին, կատարվել է ՀՀ հանրակրթական համակարգի կառավարչական զարգացումների մատրիցային վերլուծություն, դիտարկվել է նաև հանրակրթության միջոցով գործազրկության հաղթահարման ռազմավարական կառավարման մոտեցումները:

Ատենախոսության երրորդ՝ **«Հանրակրթության ռազմավարական կառավարման կատարելագործման կառուցակարգերը ՀՀ-ում»** գլխում, հեղինակի կողմից մշակվել է ՀՀ-ում հանրակրթության ռազմավարական կառավարման կատարելագործման նոր մոտեցում, որի շրջանակներում սահմանվել են հանրակրթության զարգացման ռազմավարական առաջնահերթությունների աստիճանակարգը, հիմնավորվել է ոլորտի ռազմավարական կառավարումը կատարողականի առանցքային ցուցանիշների համատեքստում, ինչպես նաև առաջարկվել են հանրակրթության ֆինանսավորման ռազմավարության բարելավման ուղիներ:

Ատենախոսության **«Եզրակացություններ»** բաժնում ամփոփվել են հետազոտության

հիմնական արդյունքները և ներկայացվել համապատասխան առաջարկությունները:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Հեղինակն իրավացիորեն նշում է, որ հանրակրթությունը մարդկային կապիտալի զարգացման առանցքային գործոն է, սակայն աշխատանքում, ըստ էության, չի բացահայտվում, թե ՀՀ-ում առկա հանրակրթության համակարգը ինչպես է ազդում մեր քաղաքացիների զարգացման վրա, այդ թվում՝ չափերի ձևով: Այս պարագայում չկա տնտեսագիտական գործոնային վերլուծություն:
2. Օրենսդրական դաշտին վերաբերող վերլուծությունը բավականին ընդհանրական է, և ճիշտ է նշվում, որ այս պարագայում գերակայում են վերահսկողական գործառույթները և նպատակադրումները, նաև կառավարման առումով լղոզված են և հստակ չեն: Սակայն ատենախոսն ինքը չի առաջարկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ:
3. Նաև աշխատանքում առկա չեն օրենսդրական կարգավորումներից բխող վարչարարության արդյունավետության գնահատականներ: Ընդհանրապես աշխատանքում փոքր մասնաբաժին ունեն միջոցառումների արդյունավետության ինչպես մեթոդաբանական, այնպես էլ դրանից բխող գործնական հաշվարկները:
4. Ուսուցիչների որակավորման հարցը աշխատանքում կարևորվում է, սակայն նրանց իրական վերապատրաստումների և դրանից բխող կատարելագործումների սխեմաները տրված չեն: Ակնհայտ է, որ ուսուցիչների միջին տարիքային սահմանը տանում է դեպի ծերացում և այդ բացը լրացնելու համար մոտիվացիոն դաշտը շատ փոքր է: Լուծումները, այս առումով, տրված չեն:
5. Դպրոցների փակման և բացման հարցի մասին պետք է նշել, որ անկախ դպրոցականների թվաքանակից, բնակավայրը պետք է դպրոց ունենա: Այս առումով, հայտնի է, որ անցած մի քանի տարիների ընթացքում մարզերում և գյուղական բնակավայրերում հատկապես, դպրոցներ են փակվել՝ ակնկալելով, որ մոտակա բնակավայրերում նորերը կբացվեն, սակայն բացակայում է դրա հստակ վիճակագրությունը:
6. Ատենախոսն իրավացիորեն անդրադառնում է նաև հանրակրթությանն ուղղված ծախսերին և գործազրկության փոխառնչության վերլուծությանը: Վերոնշյալի շրջանակներում մշակված համաթիվը, մեր կարծիքով, ամբողջապես չի բացահայտում խնդրի էությունը, և ավելին, առաջարկվում է Ֆինանսների նախարարությանը երկու տարվա ընթացքում նոր համաթիվ մշակել: Սա խնդրի լուծում չէ:
7. Աշխատանքում տեղ են գտել խմբագրական և ոճային որոշ բացթողումներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության արդյունքների տեսական և կիրառական նշանակությունը:

Արամայիս Հայկազի Սիմոնյանի թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն և գիտական պատշաճ մակարդակով կատարված հետազոտություն է:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթները ամփոփված են հրապարակված 7 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի առանցքային դրույթները և արդյունքները:

Այսպիսով՝ Արամայիս Հայկազի Սիմոնյանի «Հանրակրթության ոլորտի ռազմավարական կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի»-ի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Մ. Ս. Մելքումյան
«18» հունիս 2026 թ.

Միքայել Սերգեյի Մելքումյանի
ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՊՏՀ գիտական քարտուղար՝ Ն. Հ. Դարբինյան
«18» հունիս 2026 թ.